# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՎԻՈԼԱ ՍՊԸ-Ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 24 | COMBO Cassette | AccuBioTech Co., LTD | " ՄԻԱՎ 1/2, ՎՀԳ (HCV), HBsAg և Սիֆիլիսի համակցված (Combo) իմունոքրոմատոգրաֆիկ արագ թեստի 1. Ընդհանուր նկարագիր և նշանակություն Առաջարկվող թեստը պետք է նախատեսված լինի մարդու ՄԻԱՎ 1/2 հակամարմինների, Հեպատիտ C վիրուսի (HCV) հակամարմնի, Հեպատիտ B-ի մակերեսային հակածնի (HBsAg) և Սիֆիլիսի (Treponema Pallidum) հակամարմնի միաժամանակյա որակական հայտնաբերման համար: Որպես հետազոտվող նմուշ պետք է կիրառելի լինեն մարդու ամբողջական արյուն, շիճուկի կամ պլազմայի համար: Թեստը պետք է վերջնական արդյունքը ապահովի 15 րոպեի ընթացքում : Արդյունքները պետք է ընթերնելի լինեն մինչ 30 րոպեի ընթացքում: Խիստ պահանջներ ՄԻԱՎ 1/2 զգայունությունը՝ ոչ պակաս քան 99.70% , սպեցիֆիկությունը՝ 100% : Հայտնաբերման շեմը (Limit of Detection) պետք է լինի 1:1280: Վիուսային հեպատիտ Ց (HCV) Զգայունությունը՝ ոչ պակաս քան 98.71% , սպեցիֆիկությունը՝ ոչ պակաս քան 99.33%: HbsAg պարագայում՝ Զգայունությունը՝ ոչ պակաս քան 98.97% , սպեցիֆիկությունը՝ ոչ պակաս |

| | | | |
|---|---|---|---|
| | | | քան 99.78% ։ Հայտնաբերման շեմը պետք է կազմի 4 IU/mL։Սիֆիլիս (TP) պարագայում՝ Զգայունությունը՝ ոչ պակաս քան 98.47% , սպեցիֆիկությունը՝ ոչ պակաս քան 99.68% ։ Հայտնաբերման շեմը՝ 1:128։ Ամբողջական արյան հետազոտման դեպքում պետք է պահանջվի նմուշի առնվազն 50 μL ծավալ (2 կաթիլ) և անմիջապես 1-2 կաթիլ բուֆերային լուծույթ։ Շիճուկի/պլազմայի հետազոտման դեպքում պետք է պահանջվի առնվազն 60 μL - 80 μL նմուշ (2-3 կաթիլ)՝ առանց բուֆերային լուծույթի կիրառման։ Թեստի արդյունքների վրա չպետք է ազդեն հետևյալ գործոնները՝ իրենց նշված մաքսիմալ կոնցենտրացիաներով.Դեղնուկ (բիլիռուբին մինչև 393.5 μmol/L), Հեմոլիզ (հեմոգլոբին մինչև 25 g/L), Դիսլիպիդեմիա (տրիգլիցերիդներ մինչև 29.41 mmol/L), Ռևմատոիդ գործոն (մինչև 334.9 IU/mL)։ Մեկ տուփը պետք է պարունակի 25 անհատական փաթեթավորված թեստ-կասետ (չորացուցիչով), 25 միանգամյա կաթոցիչ և 3 սրվակ բուֆերային լուծույթ (յուրաքանչյուրը 5 մլ ծավալով)։Պահպանման ջերմաստիճանը պետք է լինի առնվազն 4°C - 30°C պայմաններում ։ Պիտանիության ժամկետը պետք է արտադրման պահից առնվածն 24 ամիս։ Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի մնացորդը պետք է կազմի ընդհանուր պիտանիության ժամկետի ոչ պակաս քան 70%-ը կամ նվազագույնը 16 ամիս (հաշվի առնելով 24 ամիս ընդհանուր պիտանիությունը)։ Մատակարարվող տուփերի վրա հստակ պետք է նշված լինեն արտադրողի տվյալները, պահպանման պայմանները , արտադրման ամսաթիվը , պիտանիության ժամկետը և սերիայի համարը (LOT)։ Արտադրող ընկերությունը պետք է ունենա առնվածն ISO 13485 հավատարմագիր։ Մատակարարվող յուրաքանչյուր սերիա պետք է ուղեկցվի արտադրողի կողմից տրամադրված Որակի վկայականով (Certificate of Analysis / Quality Control Certificate)։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО «ВИОЛА» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 24 | | | |